

Ն Ա Խ Ա Պ Ա Շ Ա Ր Ո Ւ Մ Ն

Հ Ր Ե Ա Յ Ք .

Հրէից ազգը անտարակոյս աշխարհիս ամենէն նշանաւոր ազգն է, որովհետեւ նա միայն ըսուեր է հին ատենը ժողովուրդ Աստուծոյ եւ ընտնաւ ազգ, մինչդեռ ուրիշ ազգերը կը սուէին այլազգիք, եւ շատ անգամ յունական բառով՝ հեքստոսք: Աբրահամու պէս նախահայր ունեցած լինելով, կարծեհային եւ կըսէին. «Ունիմք մեք հայր զԱբրահամ. որդիք Աբրահամու եմք»: Եւ Յակոբայ նահապետին պատուանունովը կըսուէին Իսրայէլացիք կամ Իսրայէլ: Նոցա ազգէն մարմին առաւ Փրկիչն աշխարհի, եւ ի նոցանէ ընտրեց իւր սուրբ Առաքեալներն ու աշակերտները, որ բոլոր աշխարհս քրիստոնեայ ըրին, եւ իրենց սովորեցուցած վարդապետութիւնը իրենց արեամբը կնքեցին: Յայտնի է ամենուս, թէ որչափ որ Աստուծոյ օրհնութիւնը առատ էր այս ազգին վրայ՝ քանի որ հաւատարիմ էր առ Աստուած, նոյնպէս եւ Աստուծոյ անէծքը կարկուտի պէս տեղաց վրան՝ երբ ապերախա գտնուելով հեռացաւ յԱստուծոյ:

Հրէից ազգին Աստուծոյ երեսէն ընկնելէն ետքը՝ վրան երեւցած անէծքներուն մէկն ալ այս է որ նոյն իսկ Մովսէս մարգարէին խրատները՝ Թալմուտին անճոռնի վարդապետութիւններովը բոլորովին այլանդակուած ու խառնափնդորուած են, եւ մէջերնէն բազումք իրենց ընդհանրապէս ցած՝ հակառակող եւ զօշաքաղ բնաւորութեամբը ատելի եղած են այն ամենայն ազգաց եւ ժողովրդոց որոց մէջ ցրուեր է զիրենք Աստուած:

Միայն թէ քանի մը նախապաշարմունքներ ալ կան արեւելք եւ արեւմուտք այս ազգին վրայ. եւ շատ մարգիկ այն նախապաշարմունքներով խաբուած, աւելի ալ ատելուելութիւն եւ չափազանց արհամարհանք մը

ունին հրէից դէմ: Մեր միտքը այն չէ որ քննեմք այս տեղ թէ որքան իրաւունք ունին կամ չունին ուրիշ ազգերը՝ արհամարհանօք վարուելու հրէից հետ. կամ թէ Հրեայք որքան վրէժխնդիր եղած են ատենով, եւ այժմ եւս կլինին ի քրիստոնէից եւ յայլ ազգաց կրած նախատինքներուն ու հալածանքներուն համար: Այսչափը միայն յայտնի է որ ինչպէս քրիստոնեայք եւ ուրիշ ազգեր բուական եւ մեծամեծ պատճառներ ունէին ատելու Հրեաները, այսպէս ալ Հրեայք իհարկէ մտքերնին դրած են թէ իրենք ալ ծանր պատճառներ ունին ուրիշ ազգաց դէմ ռի պահելու: Այս այսպէս լինելով՝ ամենեւին դարմանք չէ որ ատենով անհնարին հալածանքներ քաշեր են Հրեայք ամենայն երկիր եւ ամէն ազգէ, մանաւանդ Սպանիոյ մէջ, ուսկից չարաչար խստութեամբ դուրս ալ վարուեր են: Անոր հակառակ, զարմանք չէ որ Հրեայք ալ ամէն տեղ եւ ամէն ժամանակ ուրիշ ազգաց վրայ, եւ մանաւանդ քրիստոնէից վրայ, ծուռ աչքով եւ վրէժխնդիր հոգևով նայած են:

Այստեղ իբրեւ ամենայն քրիստոնեայ ազգաց մէջ տարածուած նախապաշարմունք այս յիշեմք, որով կըսուի թէ Հրէից մէկ օրէնքը կամ սովորութիւնը այս է որ ամէն տարի անպատճառ քրիստոնեայ տղայ մը կգողնան, կփակեն ու կպահեն մեծ պահոց մէջ. յետոյ իրենց Ձատկի տօնէն քանի մը օր առաջ կմորթեն, կամ թէ մարմինը ծակծրկելով կմեռցնեն, արիւնը իրենց բաղարջին կամ մացային խմորին մէջը կշաղեն, աւելցածն ալ ապակիէ անօթներու մէջ դրած ու կնքած՝ իրենց պատեքին օրերը մինչեւ հեռաւոր տեղեր իրարու ընծայ կուղարկեն:

Այս կարծիքը չեմք կրնար ըսել թէ բոլորովին անհիմն է. վասն զի 1840-ին Դամասկոս (Ծամ) պատահած դիպուածը, որոյ վրայ այնչափ խօսքեր եղան եւ այնչափ բաներ գրուեցան, ամենուն յայտնի է, եւ կարելի չէ բոլորովին սուտ հանել: Կարելի չէ ստել նաեւ այն ամենայն պատմութիւնները՝ որ գրեթէ ամէն Հրեայ գտնուող քաղաքներու մէջ՝ իբրեւ իրօք պատահած կ'պատմուին: Այսու ամենայնիւ նախապաշարում եւ ծուռ կարծիք կամ գոնէ չափազանց ամբաստանութիւն կ'համարիմք ըսելը՝ թէ այդ գազանական թշնամութիւնը եւ չարութիւնը ամէն տարի եւ ամէն տեղ կ'կատարեն կամ կ'ջանան կատարել ամենայն Հրեայք. վասն զի ոչ միայն իրենց գրքերուն մէջ ասոր վրայ յիշատակութիւն չկայ, այլ եւ հրէութենէ դարձած քրիստոնեայ եղած շատ անձինք, թէպէտեւ իրենց ազգին ուրիշ պակասութիւնները ամենեւին չեն ծածկած, բայց այս չարութիւնը ոչ երբէք ըսած են թէ կայ ընդհանրապէս Հրէից մէջ այն կերպով՝ ինչ կերպով որ քրիստոնէից մէջ սովորութիւն եղած է պատմելը: Մեզի կերեւնայ թէ քրիստոնեայք իրենց զաւկըները Հրէից տները մտնելէն զգուշացընելու համար հնարած են այս կարծիքը, որ իբր թէ ամէն տարի եւ ամէն տեղ այդպիսի սովորութիւն ունին նոքա:

Գիտեմք որ Հրէից մէջէն Թարմուսախսն ըստուողները, այսինքն անոնք որ Սուրբ գրքին խօսքերէն վեր կ'զնեն Թալմուտին առասպելները, կամ թէ անոր մէջ գրուած անճոռնի մեկնութիւնները, այս ծուռ վարդապետութիւնս ալ ունին՝ թէ քրիստոնեայ մը մեռ-

ցընելը Հրէին համար մեղք չհամարուիր, եւ Մայնոնիս անունով հռչակաւոր բարունին, որ ասիից 650 տարի առաջ էր, կ'ըսէ իւր գրուածքներէն մէկուն մէջ՝ թէ «Մեզի հրամայուած է որ միևիմեկերը, այսինքն հերետիկոսները (քրիստոնեաները) մեռցընեմք: Ուստի եթէ իսրայէլացի մը կ'ապաշտու թիւն ընէ, կամ Աստուծոյ դէմ գիտութեամբ եւ կամաւ մեծ մեղք գործէ, կամ թէ եպիկուրեանց հետեւելով՝ օրինաց եւ մարգարէից չհաւատայ, այնպիսին պէտք է սպաննել կամ հրապարակաւ եւ մենամարտութեամբ, եւ կամ խաբէութեամբ»: Ասոր նման վարդապետութիւններ ուրիշ թալմուտականաց գրքերուն մէջ ալ կան, որ յայտնապէս կ'քարոզեն թէ աշխարհիս ուրիշ ժողովուրդները մարդկային հոգի չունին, այլ անբանից նման են. ուստի ինչպէս որ անբան անասունները սպաննելը մեղք չէ, այնպէս ալ մեղք չհամարուիր քրիստոնեաներն ու հերետիկոսները մեռցընելը: — Սակայն այս եւս յայտնի է որ նաեւ թալմուտականաց մէջ խիստ շատ Հրեաներ կան որ այդ վարդապետութիւնը կ'մերժեն, մանաւանդ այժմու ժամանակս: Անոր համար փափաքելի է որ քրիստոնեայք գթութեամբ վարուին՝ գոնէ այսուհետեւ՝ այն խեղճ ժողովրդաց հետ, իհարկէ միշտ զգուշանալով նոցա սեպհական պակասութիւն համարուած խարդախութենէն ու կեղծաւորութենէն: Եւ զայս կ'պահանջէ ոչ միայն մարդկութիւնը, այլ մանաւանդ քրիստոնէական ներողամիտ հոգին, որ կ'քարոզէ ամենուս՝ սիրել զամենայն մարդ, եւս եւ մեր թշնամիներն ու զմեզ հալածողները, եւ ազօթք ընել նոցա գարձին եւ զգաստութեանը համար:

